

«ԿՈՎԿԱՍԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՑՈՒՄԸ (ՀԱՅԱՍՏԱՆ, ՎՐԱՍՏԱՆ,
ԱՂՎԱՆՔ)». ԳԻՏԱԺՈՂՈՎ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Ավստրիայի գիտությունների ակադեմիայի Բյուզանդագիտության հանձնաժողովը, Վիեննայի համալսարանի Բյուզանդագիտության և նոր հունարենի ինստիտուտը և Ավստրո-հայկական ուսումնասիրությունների ընկերությունը 1999 թ. դեկտեմբերի 9-12-ը կազմակերպել էին գիտաժողով՝ նվիրված Կովկասի ժողովուրդների դարձի պատմությանը: Գիտաժողովի նպատակներից էր լսել Կովկասի քրիստոնեացման և դարձի մասին մասնագետների երբեմն հակամետ տեսակետները, լուծել տարածայնությունները 2001 թ. Փարիզում տեղի ունենալիք XX բյուզանդագիտական կոնգրեսի շեմին, որոշել կովկասյան մշակույթի պատմության հարցերի այն ոլորտները, որոնք կարելի է քննարկել համաշխարհային այդ հավաքում:

Գիտաժողովի բացման արարողությունը ողջույններով հանդես եկան բյուզանդագետ Վ. Զայրտը, Ավստրիայի ակադեմիայի պրեզիդենտ Վ. Վելցիգը, Վիեննայի համալսարանի հասարակագիտության ֆակուլտետի դեկան Յ. Ռյոմերը, Վիեննայի կաթոլիկ եկեղեցու արքեպիսկոպոս կարդինալ Խ. Շյոնրոոնը և հայոց առաքելական եկեղեցու արքեպիսկոպոս գերաշնորհ Մ. Գրիգորյանը (վերջինս ներկաներին դիմեց նաև Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի էջմիածնից առաքված ողջույնի խոսքով): Գիտաժողովը ստացել էր լայն հասարակական հնչողություն: Նիստերին ակտիվորեն մասնակցում էին Ավստրիայում Ադրբեյջանի դեսպանատունը, աղվանագետ Ֆարիդա Մամեդովան, իսկ վրաց գեսպանատունը Ավստրիայի Ակադեմիայի սրահում բաց էր արել Վրաստանի հարակից տարածքների քաղկեղոնական եկեղեցիների լուսանկարների մի հետաքրքիր ցուցահանդես, որը կազմվել էր վերջին տարիներին վրաց գիտնականների կազմակերպած գիտարշավների նյութերից: Գիտաժողովի նիստերում երբեմն հնչեցին նաև քաղաքական հարցադրումներ, որոնք վերաբերում էին այսօրվա Կովկասի հակամարտություններին: Պետք է ափսոսանքով արձանագրել, որ Ավստրիայում Հայաստանի դեսպանատունը այդ խնդիրների հետ կարծես չէր առնչվում:

Գիտաժողովը տևեց երկու օր: Տեղի ունեցավ վեց նիստ, որոնց ընթացքում լսվեց 17 զեկուցում: Մի շարք նիստեր վարում էին Վիեննայի բյուզանդագիտական դպրոցի ներկայացուցիչներ Հ. Կոզերը, Օ. Կրեստենը, է. Գամիլչեզը, մյուսները՝ կոնֆերանսի անմիջական մասնակիցներ Ռ. Թոմսոնը, Ն. Թիերին, Ժ.-Պ. Մահեն: Հանդիսավոր նիստում զեկուցումը հանձնարարված էր Ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահենին («Կովկասի դարձը. մեկ պատմագրություն կրկնակի հիմքով»), որն անդրադարձավ տարածաշրջանի քրիստոնեացման երկու հիմնական ալիքների (առաքելական շրջանի քարոզչության և պետական կրոն հռչակելու դարաշրջան) արտացոլմանը Այսրկովկասի երեք եկեղեցիների պատմական ավանդույթներում:

Բյուզանդական քաղաքակրթության և եկեղեցու մասնագետ Զ. Դադրոնը իր զեկուցումն անվանել էր «Քրիստոնեություն, կայսրություն և ազգություններ», որի ընթացքում, շրջանառության մեջ դնելով մի քանի տարի առաջ լույս տեսած «Քրիստոնեության պատմություն» Դ հատորի զաղափարները, փորձեց Բյուզանդական կայսրության մշակույթի ինքնատիպությունը վերագրել բազմաթիվ ժողովուրդների ազգային, լեզվա-

կան առանձնահատկություններին և քաղաքական նպատակների տարբերություններին, որոնք արտահայտվել են նաև ազգային-եկեղեցական առանձին կազմակերպությունների ստեղծման փաստի մեջ: Նույն նիստում հանդես եկած հաջորդ երկու զեկուցողներն էին Պ. Մուրադյանը («Վովկասի երեք ժողովուրդների մատենագրությունների սկիզբն իբրև քրիստոնեացման հետևանք») և արքեպ. Մ. Գրիգորյանը («Հայոց կանոնական իրավունքի զարգացումը Դ դարում»): Առաջին զեկուցողը, անդրադառնալով Այսրկովկասում քրիստոնեությունից առաջ տարածված արային սիստեմներին, զարգացրեց այն միտքը, որ Վովկասի քրիստոնյա ժողովուրդների այբուբենները և մատենագրությունները քրիստոնեական մշակույթի հետևանք են և առաջացել են միևնույն ժամանակ: «Կանոնագիրք Հայոց»-ի ձևավորման պատմության անդրադառնալով, Մ. Գրիգորյանը փորձեց ցույց տալ, որ Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի և Ներսես Մեծի մեզ չհասած կանոնախմբերը եղել են Շահապիվանի ժողովականների տրամադրության տակ և օգտագործվել են նրանց կազմած կանոններում, իսկ Տիեզերական եկեղեցու կանոնախմբերը մինչև գրեթե գյուտար շրջանառության մեջ են եղել հունարեն բնագրով:

Հաջորդ նիստը նվիրված էր քրիստոնյա Վովկասի գեղարվեստական մշակույթին: Ըստ Հալլեի համալսարանի դասախոսներ Հ. Գոլցի և Ա. Դրոստ-Աբգարյանի («Հայաստանի քրիստոնեացումը հայոց եկեղեցու Շարակնոցի հայելում») հայոց դարձի պատմության բազմաթիվ դրվագներ արտացոլված են Հայոց Շարակնոցի Գրիգոր Լուսավորչին, նրա որդիներին ու թոռներին, Ներսես Մեծին, ս. Սահակին, Հռիփսիմյանց կույսերին, ս. Սանդուխտին, Շողակաթին և ս. Թարգմանիչներին նվիրված կանոններում: Այս նիստում իր զեկուցումն ընթերցեց նաև հայկական ճարտարապետության միջնադարյան հուշարձանների ճանաչված գիտակ Մ. Թիերին, որն իր աշխատանքը նվիրել էր առանձին հուշարձանի պատկերագրությանը («ս. Գրիգորի պատմությունը նկարված Անիում Տիգրան Հոնենցի կառուցած (1215) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում»): Հեղինակը ուշագրավ մեկնաբանություններով ունկնդիրներին ներկայացրեց եկեղեցու 17 պատկերները, որոնք ուղեկցվում են վրացերեն արձանագրություններով: Քննարկման ժամանակ Պ. Մուրադյանը Մ. Թիերու ուշագրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ զեկուցման մեջ հաշվի չի առնվել, որ 1215 թ. թվագրվող եկեղեցու շինարարական արձանագրությունը գրված է հայոց առաքելական եկեղեցու հետևորդի կողմից (նզովքի բանաձևում հիշատակվում են միայն երեք ս. տիեզերական ժողովների հայրերը), այդ իսկ պատճառով եկեղեցու անցումը քաղկեդոնականների ձեռքը պետք է թվագրել ավելի ուշ ժամանակաշրջանով: Վովկասյան միջնադարյան արվեստի մեկնաբան Ն. Թիերին, շարունակելով ամուսնու զեկուցման հիմնական մոտիվը՝ Գրիգոր Լուսավորչի պատկերագրությունը վրաց եկեղեցում, իր զեկուցումը նվիրեց «Ս. Նինոյի Կենաց սյան հրաշքի» պատկերագրական ավանդույթին:

Հաջորդ երեք նիստերից յուրաքանչյուրը նվիրված էր այսրկովկասյան երեք ժողովուրդներից (հայեր, աղվաններ և վրացիներ) մեկի մշակույթին: Առաջին նիստում քննարկվեցին հայոց դարձի պատմության խնդիրները: Չեկուցումներով հանգես եկան Վ. Ջալստը («Հայաստանի քրիստոնեացման կամ Տրդատի մկրտության պատմական հիմքը և ժամանակագրությունը»), Մ. վան Հսբրուկը («Հռիփսիմեի և նրա ընկերուհիների վարքը») և Ռ. Թոմսոնը («Ասորի քրիստոնեությունը և Հայաստանի դարձը»): Վ. Ջալստը իր զեկուցման մեջ ընդգծեց, որ Վովկասի և Հայաստանի դարձի ու Տրդատի մկրտության թվականի ճշտումը ներկա գիտաժողովի հիմնական խնդիրներից է: Վ. Ջալստը, Մ. Գրիգորյանը, Ժ.-Պ. Մահեն քննարկման ժամանակ հիմնականում պաշտպանեցին այն տեսակետը, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն կարող էր հռչակվել

միայն Միլանի էդիկտից (312 թ.) հետո: Նորագույն սկզբնաղբյուրների մեջ նախընտրություն տալով Պայկուլիի արձանագրությանը, Վ. Ջայբորև և մյուս բանաստեղծները, սկզբունքային նշանակություն էին տալիս Գրիգոր Լուսավորչի եպիսկոպոսական ձեռնագրությանը Ղևոնդ մետրոպոլիտի կողմից, որը իբրև Կեսարիայի եպիսկոպոս հայտնի է 314 թ.: Մ. վան Էսթրուկը իր զեկուցումը նվիրել էր Կովկասի քրիստոնեացման գործում Հռիփսիմյանց կույսերի դերին և առաջ էր քաշում այն վարկածը, որ այդ պատմության մեջ հասած տարբերակները վերջնականապես ձևավորվել են V-VII դարերի եկեղեցական վեճերի հակաքաղկեդոնական պայքարի մթնոլորտում, որն իր կնիքն է դրել ինչպես հայ, այնպես էլ վրաց մատենագրության մեջ Նինոյի մասին պատմող երկերի վրա: Անգլիացի հայագետ Ռ. Թոմսոնը, հիմնվելով Հայագիտության նվաճումների վրա, իր զեկուցման մեջ հավաստեց ասորի քրիստոնյաների ազդեցությունը հայ մշակույթի վրա, դրա լավագույն ապացույց համարելով Աստվածաշնչի մի շարք բնագրերի, Ափրաստի կամ Եփրեմի երկերի առկայությունը հայ մատենագրության մեջ: Ընդգծելով, որ վաղ քրիստոնեական Հայաստանում հունարենի հետ հավասարապես օգտագործվում էր արամեերենը, հեղինակը զարգացրեց այն միտքը, որ պետք է շարունակել ասորական մշակութային շերտի ուսումնասիրությունը հայ մատենագրության մեջ:

Վիեննական գիտաժողովի նիստերից մեկը նվիրված էր Կովկասյան Աղվանքի քրիստոնեացմանը և մշակութային փշրանքների վերհանմանը: Կ. Յուզբաշյանը («Աղվանների դարձը և ազգային գիտակցության ձևավորումը»), հիմնվելով Ա. Հակոբյանի մեկ տասնամյակ առաջ լույս տեսած աշխատության վրա, «Աղվանից պատմության» հիմնական սկզբնաղբյուրի մեջ առանձնացրեց չորս երկ (կարծում եմ դերքննադատության արդյունք է այն պարագան, որ Կ. Յուզբաշյանը հիմնական աղբյուրների թվում անտեսեց Մովսես Կաղանկատվացի հեղինակին): Կ. Յուզբաշյանն անդրադարձավ ժամանակի ընթացքում Աղվանքում ձևավորված սահմաններին և երկրամասին հարևանների կողմից տրված անուններին:

Մի քանի տարի առաջ Սինայի Ս. Կատարինե վանքում հայտնաբերված աղվաներեն կրկնագիրը մեծ ոգևորություն է առաջացրել ընդհանրապես բոլոր կովկասագետների շրջանում: Իրա դրսևորումներից մեկն էլ պետք է համարել Բ. Ուտիեի զեկուցումը, ուր հեղինակը ամփոփելով հայագետների և վրացագետների (Շանիձե, Աբուլաձե, Մելիքսեթ Բեկ, Անասյան և այլն) հետազոտությունները, հայկական մատենագրության մեջ աղվանից դրականության հետքեր գտնելու աշխատանքը, ներկայացրեց մի ապոկրիֆ գրվածք («Յաղագս պատմութեան սուրբ եւ աստուածային իւղոյ, զոր դտեալ սրբոց հարցն յարեւելս յազուանից գիրս եւ թարգմանեցին ի հայ գիրս...»), որն ըստ ձեռագրում պահպանված վերնագրի թարգմանված է աղվաներենից: Իհարկե, դեռ վաղ է պնդել, թե այդ երկը կարող է աղվաներենից թարգմանություն լինել, այնուամենայնիվ, հայ մատենագրության ծալքերում նման վկայությունների լիակատար հավաքումը և հրապարակումը կարելի է համարել Հայագիտության կարևորագույն խնդիրներից մեկը:

Նիստերից մեկը նվիրված էր Վրաստանի քրիստոնեացման պատմությանը: Թբիլիսիի Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի տնօրեն, հայագետ Ջ. Ալեքսիձեն իր զեկուցումը նվիրել էր «Վրաց դարձի» խմբագրությունների համեմատական ուսումնասիրությանը: Բնութագրելով այդ երկը իբրև Վրաստանի և Կովկասի քրիստոնեացման պատմության հնագույն սկզբնաղբյուրներից մեկը, հեղինակը անդրադարձավ նրա մինչ այժմ հայտնի երկու ձեռագրերին (Շատերբղի և Չելիչի) և ներկայացրեց 1990 թ. Ս. Կատարինե վանքում հայտնաբերված երկու ձեռագիր, որոնք պարունակում են նույն երկի ևս երկու տարբեր խմբագրություն, որոնց համեմատական ուսումնասիրության հիման վրա առաջարկում էր վերա-

կանգնել նախնական բնագիրը: Վրաց գիտնական Թ. Դունդուան իր զեկուցումն անվանել էր «Քրիստոնեությունը և միթրայիզմը. Վրաց պատմությունը»: Հեղինակը, հիմնվելով Վրաստանում հայտնաբերված անտիկ և միջնադարյան հնագիտական նյութի վրա, ցույց էր տալիս վրաց քրիստոնեական մշակույթ թափանցած միթրայականության տարրերը: Վ. Ջորաձեն («Գրական աղբյուրները և հնագիտական ապացույցները Անտիոքի մի շարք վանքերի մասին»), անդրադառնալով բյուզանդական կայսր Նիկիփոր Փոկասի կողմից 969 թ. Անտիոքի ազատագրմանը, այդ թվականով թվագրեց տարածաշրջանում վրացիների վերաբնակեցումը և մշակութային օջախների ստեղծումը, որոնք դործում էին Անտիոքի մելիտ պատրիարքության շրջանակներում, սակայն «սլաշտպանում էին ինքնագլուխ վրաց եկեղեցու շահերը»: Վրաց ազգային եկեղեցու և մշակույթի հուշարձաններից հեղինակն անդրադարձավ Անտիոքի շրջակայքում հայտնաբերված Ս. Բառլամի վանքին և Ս. Կենաց Փալատի եկեղեցուն: Ցավոք, Վ. Ջորաձեն շրջանցեց այս մշակութային երևույթի մյուս երեսը: Նա իր զեկուցման մեջ չանդրադարձավ այն հանդամանքին, որ այդ հուշարձանները հայտնաբերվել են այն տարածքում, ուր XI-XIV դարերում քրիստոնյա այլ մշակույթների կողքին ծաղկում էր նաև Կիլիկիայի հայկական պետության մշակույթը (նման անտեսում նկատելի էր նաև Փարիզում մեկ տասնամյակ առաջ հրատարակված Կիլիկիայի արձանագրությունները դրքում): Վ. Ջորաձեն ոչ միայն անտեսել էր այդ տարածաշրջանի ամենակարևոր հեղինակներից մեկի՝ Նիկոն Սևսարեցու (XI դար) տեղեկությունները, այլ նաև Ժ. Մսերյանի այս հարցերի շուրջ Բեյրութում հրատարակած հետազոտությունը (*Expédition archéologique dans l'Antiochène occidentale, 1964 [Melanges de l'Université St. Joseph, t. XL, fasc. 1]*), ուր բերված է նաև 1920—30-ական թթ. պեղումների ժամանակ հայտնաբերված մի վրացերեն արձանագրություն («սա հայոց եկեղեցի է» բովանդակությամբ), որը Ժ. Մսերյանի համար ընթերցել էին անվանի կովկասագետներ Բլեյլը և Պետերսը (տե՛ս Ժ. Մսերյան, նշվ. աշխ., էջ 111):

Վերջին նիստը նվիրված էր ալանների և Հայաստանի քրիստոնեացման խնդիրներին: Բ. Արձանցեայի զեկուցումն անվանված էր «Քրիստոնեացումը Հյուսիսային Կովկասում (կրոնական երկակիությունը ալանների մեջ)», ուր հեղինակն անդրադարձավ Հյուսիսային Կովկասում քրիստոնեություն ընդունած ժողովրդի ճակատագրի առանձնահատկությունը և Հյուսիսային Կովկասում երկակրոնության մշակութային ու պատմական ասպեկտներին:

Բ. Հարությունյանն իր զեկուցման մեջ («Հայոց եկեղեցու թեմերը IV դարում») զարգացրեց այն տեսակետը, որ թեմերի բաժանումները պետք է համապատասխանեին վարչական բաժանումներին: Քննելով Աղաթանդեղոսի, Կլավդիոս Պողոմեոսի, «Աշխարհացույցի» վկայությունները, հեղինակը կազմում է մի քարտեզ, ուր վկայված է IV դարի սկզբի Մեծ Հայքի 22 վարչական միավոր, որոնց համար էլ, ըստ հեղինակի, Գրիգոր Լուսավորիչը կարգել է թեմական առաջնորդներ: Այնուհետև այդ թվին ավելացնելով «Գահնամակում» հիշատակված 500-ից ավել գինվոր տված 10 նախարարությունների անունները, Բ. Հարությունյանն այն համոզմունքն է հայտնում, որ Գրիգոր Լուսավորիչը կարգել է 32 կամ 36 եպիսկոպոսական աթոռ, որի մասին վկայում է նաև XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

Պ. Լ. Աբեխյանը («Հայերի քրիստոնեացումը և այբուբենով օժտումը իբրև օրինակ մշակութային մարմնավորման, հատկապես Այսրկովկասյան մարզում») զեկուցման մեջ անդրադարձավ դիտություն մեջ լայն շրջանառություն ստացած «կայսերական եկեղեցի», «ծիսահավատաբանական եկեղեցի» հասկացություններին և այն համոզումը հայտնեց, որ Ավե-

տարանի կողմից սրբագործված է նաև «ազգային եկեղեցի» արտահայտությունը, որն իր մարմնավորումն է գտել Հայոց եկեղեցու ազգային և մշակութային գերի մեջ: «Ազգային եկեղեցու» կայացման գործում իր դերն է խաղացել նաև Հայոց այբուբենի հայտնագործումը, որի օգնությամբ քրիստոնեությունը թափանցել է հասարակության գրեթե բոլոր շերտերի մեջ, կատարելով իր միսիոներական գերը ու մտածողության մեջ կապակցելով կրոն, լեզու և ազգային ինքնագիտակցություն հասկացությունները: Հեղինակը բարձր գնահատեց Մաշտոցի դերը ազգային ինքնագիտակցության և մատենագրության ստեղծման գործում՝ բնութագրելով նրան իբրև այսրկովկասյան մշակութային գործիչ:

Ժ.-Պ. Մահեն, արժեքավորելով ընթերցված բոլոր գեկուցումները, անդրադարձավ գիտաժողովի նշանակությանը և բարձր գնահատեց այն: Վ. Զայրտը վերջում շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին և հույս հայտնեց, որ գեկուցումների բնագրերը կհրատարակվեն առանձին հատորով: Վիեննայի գիտաժողովը և նրա նկատմամբ Եվրոպայի գրեթե բոլոր բյուզանդագիտական կենտրոնների ուղադրությունը ցույց տվեց, որ Կովկասի ժողովուրդների պատմության և քրիստոնեական մշակույթների ուսումնասիրությունը ձեռք է բերում առանցքային նշանակություն:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ